

ԿՐՈՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ն. Հ. ԳԻՂԱՐՅԱՆ

Յուրաքանչյուր ազգի անցած պատմական ուղին և դրա խտացումը՝ հոգևոր մշակույթը, իր աստիճանական զարգացմամբ արտահայտվում և մարմնավորվում է ոչ միայն նյութական մշակույթի հուշարձաններում կամ գիտական գրականության ու արվեստի գործերի մեջ, այլև ազգի ինքնուրույն կեցության կարևորագույն հիմքերից մեկի՝ լեզվի մեջ: Լեզվի ընդհանուր բառապաշարն իր ընդգրկած իմաստային դաշտերի ամբողջությամբ դեպի անհայտ գաղտնարաններ տանող բանալիների մի օղակ է, որ ճիշտ կիրառելու դեպքում փաստական վիթխարի նյութ կարող է ընձեռել ամենատարբեր ասպարեզների ուսումնասիրողների համար: Եվ էականը ոչ այնքան որոշակի պատմական դեպքերի ու դեմքերի վերականգնումն է, որքան ազգի հոգեբանության ու ներքին կերտվածքի, բարոյականության ու մտածելակերպի բացահայտումը: Իսկ դա հնարավոր կդարձնի անցյալում գործած սխալների սթափ ըմբռնումը՝ ապագայում դրանցից խուսափելու երաշխիքով:

Տեղանվանագիտությունն այս տեսանկյունից սուսակել խոստումնալի ասպարեզ է: Աշխարհագրական որոշակի տարածքում ազգալեզվական գործընթացների վերլուծությունը մեծապես պայմանավորված է այդ տարածքում գտնվող օբյեկտների անվանակոչման սկզբունքների և առկա տեղանունների բազմակողմ քննության հետ: Տեղանունների ուսումնասիրությունը թույլ է տալիս թափանցելու սվյալ ժողովրդի ունեցած գուղափարների շրջանակը և դրա հիման վրա ուրվագծելու նրա անցած քաղաքակրթության ուղին, այսինքն՝ իրական կյանքը, այն բոլորը, ինչով ապրել ու ապրում է ժողովուրդը: Անունները համր արձաններ չեն, դրանք կենդանի բառեր են, պերճախոս վկաներ՝ իրենց ստեղծողների: Տեղանվան ծնունդը արդյունք է երեք գործոնի՝ պատմական, լեզվական և աշխարհագրական: Պատմական գործոնի հիմքում անվանակոչող ազգի սոցիալական և մշակութային զարգացման վիճակն է: Լեզվական գործոնը այդ ազգի լեզուն է՝ իր բառապաշարով, իմաստաբանությամբ և բառակազմության եղանակներով: Աշխարհագրական գործոնն ազգին պատկանող տարածքն է, ռելիեֆը՝ իր բնորոշ հատկանիշներով: Որոշակի աշխարհագրական տարածքի տեղանունները համասեռ չեն ոչ միայն ըստ ծաղման ժամանակի, այլև ըստ լեզվական բնույթի, որովհետև դրանք արդյունք են տարբեր ազգալեզվական ու սոցիալ-մշակութային միջավայրերի: Սկզբնապես բառ-տեղանունը կամ բառ-կապակցություն-տեղանունը լիարժեք իմաստակիր միավոր է՝ հասկացական իր ծավալով: Սակայն բառի տեղանվանացումը ի վերջո հանգեցնում է նրա հասկացական ծավալի սահմանափակման, վերացական բառային նշանակության խիստ մասնավոր-

¹ Տե՛ս В. А. Никонов, Введение в топонимику, М., 1965, В. С. Жучкевич, Общая топонимика, М., 1978, А. В. Сунеранская, Общая ономастика, М., 1973:

ման, այն կրող օբյեկտների թիվը հավասարվում է մեկի. մնում է միայն անվանվող առարկան: Խաչ տեղանունն արդեն բոլորովին էլ խաչ բառը չէ, այն նշանակում է նախ՝ լեռնագագաթներ Բյուրակն-Մնձուրյան և Անտիտավրոսյան լեռնահամակարգերում, ապա՝ ավան Բարձր Հայքի Մանանաղ գավառում և գյուղ Վանի նահանգում: Այսպիսով, տեղանվան բովանդակությունը որոշակի օբյեկտ է, առարկա:

Դարերի ու հազարամյակների խառնարանում բազում լեզվական, էթնիկական և պատմական գործընթացներ են տեղի ունենում, և տեղանունները շեն կարող զերծ մնալ նրանց ազդեցությունից: Իբրև լեզվի բառապաշարի միավոր, տեղանունն ամենից առաջ ենթակա է հնչյունական օրենքներին, ապա արտալեզվական երևույթներին՝ պատերազմներ, տեղաշարժեր, ազգերի միաձուլումներ և այլն: Իշխող գաղափարախոսությունների փոփոխություններն ու հեղափոխությունները մեծավասամբ հանգեցնում են տեղանունների մի ամբողջ շերտի դուրս մղման և նորի գոյացման: Այսպես՝ անցումը հեթանոսությունից քրիստոնեության բերեց իր հետ հին հայկական հեթանոսական տեղանուններից շատերի ջնջում, դրանց փոխարեն առաջացան քրիստոնեական սրբությունների գերազասությունն արտահայտող մեծաթիվ նոր տեղանուններ:

Այս վերլուծության նյութը դիցանունների և կրոնական տարրեր հավատալիքների հետ կապված տեղանուններն են: Տեղանունների ընդհանուր ամբողջության մեջ այս խումբն առանձնանում և յուրահատուկ դիրք է գրավում: Նախ՝ կրոնական բովանդակության տեղանունները (ԿՐՏ) կայունության տեսանկյունից ամենախոցելին են: Այս առումով ներկայումս մենք ապրում ենք շատ բնորոշ շրջադարձային ժամանակահատվածում. համայնավարական և խորհրդային գաղափարախոսության ու կարգերի տապալումը հանգեցրել է ազգային-կրոնական գաղափարների վերազարթոնքի, որն էլ ուղղակիորեն դրսևորվում է անվանափոխման, իսկ հաճախ նաև անվանավերականգնման հախուռն գործընթացով: Այնուհետև ԿՐՏ-երը շատ ավելի որոշակիորեն են արտահայտում տվյալ հանրության կյանքում տեղի ունեցող պատմական վերափոխումները և զարգացումը. բնապաշտական բազմաստվածությունից անցումը մենաստվածության, քրիստոնեությունը զուգահեռ այլ կրոնների գոյությունը տվյալ տարածքում: ԿՐՏ-երը կարելի է դասակարգել մի քանի սկզբունքների համաձայն՝ իմաստային, կառուցվածքային և այլն: Հիմնականը իմաստային դասակարգումն է, որովհետև այն վեր է հանում լեզվի (տեղանունները լեզվական միավորներ են) և նրա կրողների սոցիալ-հոգեբանական ու մտածական գործունեության ոլորտների միջև առկա կապերը: Իմաստային դասակարգումը բազմաստիճան է. ԿՐՏ-երը նախ բաժանվում են հեթանոսական և քրիստոնեական խմբերի, մահմեդականության հետ կապված տեղանունները սակավաթիվ են՝ Իսլամաձոր, Իսլամ փաշա, Մուհամմեդի գյուղ և այլն: Այնուհետև այս երկու խմբերում էլ առանձնանում են. ա) լեզենդների, ավանդությունների հիմքի վրա՝ առաջացած տեղանուններ՝ Ազուսի տապան, Մենդոց անտառ, Գյուղ ութից... բ) կրոնական ծեսերի և հավատքի ատրիբուտների հետ կապված տեղանուններ՝ Ավետյաց խաչ, Մատաղարուր, Ինն մասունք, Բագին... գ) դիցանունների, սրբերի և դրանց հակադիր բևեռի՝ մուժ ուժերի անուններ հիման վրա՝ ծագած տեղանուններ՝ Դից մայրի, Անահտական, Հուղայի դուռ, Գրիգորաշեն... դ) կրոնական զգացումներ արտահայտող տեղանուններ՝ Կամակատար, Երաշխավոր, Զորավիգ... ե) կրոնական շինություններ և հաստատություններ նշանակող տեղանուններ՝ Վանք, Անապատ, Եկեղեցի:

Այս խմբերից յուրաքանչյուրը տարբերվում է և իր ընդգրկման ոլորտի

ծավալով, և գործածութեան հստակականութեամբ, և կառուցվածքային կազմակերպումով:

Հեթանոսութեան ծնունդ տեղանունները, ծագումնաբանորեն ավելի հին լինելով, պատմական և լեզվական առավել մեծ հետաքրքրություն են առաջացնում: Այս խմբի տեղանունների շարքում նախ առանձնանում են հեթանոսական դիցարանի զլխավոր աստվածների ու աստվածուհիների անուններից ստեղծված տեղանունները, որոնք նաև ամենամեծաթիվն են: Գլխավոր հայր աստծո՝ Արամազդի անունով հայտնի են մի գետ և լեռնադազաթ, լեռնանցք Փոքր Կովկասի լեռնահամակարգում: Իսկ նրա դուստր՝ պտղաբերության, արգասավորության, իսկ ավելի վաղ շրջանում նաև ռազմի աստվածուհի Անահիտի անվամբ կոչվել են ոչ միայն բազում մեհայաններ թիլում, Աշտիշատում և այլուր, այլև գավառ, լեռնաշղթա, լեռնադազաթ, գյուղ, ձոր: Բարձր Հայք աշխարհի Եկեղյաց գավառը Բուզանդի, Ստրաբոնի, Պլինիոսի և հունական այլ սկզբնաղբյուրներում կոչվում է Անահտական: Այդպես է կոչվում նաև Անտիպոնտական լեռնաշղթաներից մեկը իր լեռնագագաթով՝ Անահտա աթոռ: Հելլենիստական ժամանակաշրջանում Անահիտ աստվածուհին նույնացվում էր հունական Արտեմիս-Արտեմիդա աստվածուհու հետ, այստեղից էլ՝ Արտամետ տեղանունը: Վիշապաբաղ Վահագնի և նրա սիրուհի Աստղիկի անունները ևս ծնունդ են տվել մի շարք գեղեցիկ տեղանունների՝ Վահագնի ձոր, Աստղկաբերդ, լիճ, գետ և այլն: Հայոց հնաբույն և սիրիլի Տիր աստծո անունով հայտնի է մի լեռ, որի գագաթին կառուցված է եղել նրա մեհայանը, ինչպես նաև Երազամույն (Երազամոն, Երազացույց) տեղանունը Արագածոտն գավառում: Տիրին վերագրվում էր քուն բերելու և երգերը մեկնելու կարողություն: Մհեր-Միթրայի անունով հայտնի է Մհերի գուռը: Հին հայերի արևի պաշտամունքն անձնավորող Արեգ աստծո անունով ստեղծվել են բավական մեծաթիվ տեղանուններ՝ Արևիք, Արեգունի, Արեղին, Արեգավան, Արեգակնածագ... Այս անունները կրում են ոչ միայն շեներ ու քաղաքներ, այլև գետ, լեռնաշղթա, լեռնագագաթներ, աղբյուրներ, ձորեր ու անգամ գավառակ (Սևանա լճի ավազանում): Արեգ կամ արև արմատով տեղանունները աշխարհագրական մեծ տարածում ունեն՝ Լեռնային Կլիվկիտ, Տուրուբերան, Ակն, էրզրում, Զանգեզուր, Սևան, Արարատյան դաշտ... Սա վկայում է արևի պաշտամունքի խորության և ուժի մասին:

Մեր նախնիների կողմից անուշադրություն շեն մատնվել նաև ավելի ցածր կարգի աստվածությունները՝ Ծովինար (գետ, գյուղ), Աթղանական (ավան), Լեզք (դաշտ, գյուղ, կամուրջ): Աստվածների կողքին միշտ նրանց սպասավորներն են, և քրմերի ու քրմայետերի անունները ևս տեղանունների առաջացման աղբյուր են եղել: Արձան (լեռ, գյուղ), Գիսան և Դեմետր... Օտար դիցարաններից մեր տեղանուններում պահպանվել են Խալդ, Շիվինի անունները՝ Խալդ (Վան քաղաքը), Խալդիայի լիճ (Վանա լիճ), Շվանի ձոր...

Հեթանոսական պաշտամունքի հետ կապված շինությունների ու առարկաների անուններից տեղանուններ են դարձել Բագինը (ավան, գյուղ, գետ), Ատրուշանը (գյուղ), Մեհյանը (ավան): Առանձին խումբ են կազմում դի (աստված) բառի գրաբարյան տարբեր հոլովածներից կազմված տեղանունները՝ Դիս, Դից, Դիք... Հեթանոսական հավատալիքների հետ կապված Մերնդոց անտառ (քրմերն այստեղ գուշակում էին նորածինների ճակատագիրը, ըստ նրանց աստղերի և համաստեղությունների), Սոսյաց անտառ և այլն:

Քրիստոնեական տեղանունները հասկանալի պատճառով շատ ավելի մեծաթիվ են, դրանց զգալի մասը պահպանվել և գործածվում է նաև մեր օրերում: Այս խմբի մեջ իրենց պատկերավորությամբ առանձնանում են Հին Կտակարանի լեգենդների ու ավանդությունների հիմքի վրա առաջացած տեղ-

անունները: Աստվածաշնչյան լեզենդները իրենց ստեղծման պահից ոգեշնչման ու արարման ակունք են դարձել ողջ մարդկության համար: Ազոավի տապան, Ազոավի գերեզման, Ազոավախաչ, Երկիր Կայենի, Երկիր նոյյան տապանի, Կայենի բլուր, Գյուղ ութից (Նոյն իր տապանով կանգ է առել Մասիսի գագաթին, ութ հոգի ցած են իջել՝ բնակություն հաստատելով լեռան այդ ստորոտում)... Ժողովուրդը, սակայն, չի բավարարվել արդեն ստեղծված ու համաշխարհային դարձած առասպելներով, նա իր անսպառ երևակայության ու հավատի ուժով նորանոր գեղեցիկ ու բանաստեղծական պատմություններ է հյուսել: Բարեաձառ— ուխտավայր Արցախում, այստեղ ապրող մի բարեպաշտ եպիսկոպոս երկարատև ճգնությունից հետո պատարագ է մատուցել, և շրջակայքի ծառերն ի նշան ողջույնի երեք անգամ խոնրահել են իրենց սաղարթախիտ կատարները, բարև տվել Տիրոջ նվիրյալ ծառային: Ականատեսի առու (ջրանցք)— Սուրբ Ականատես Վարդապետի անունով է, նա իր գավազանի մի հարվածով բարձրացրել է ջուրը Քասաղից և ստիպել, որ այն հոսի ջրանցքով դեպի Աշտարակ: Միծաղաբեհ— այն վայրն է, ուր վշտահար Տիրամայրը ժպտացել է: Խուր Վիրապ— Գրիգոր Լուսավորչի փորձությունների և հրաշագործությունների հանրահայտ պատմությունից: Աստուծով— լճակ է Արցախի Վարանդայի գավառում: Այս ծովակում մի ճերմակ գոմեշ է ապրել իր ձագի հետ և երբեմն-երբեմն եղջյուրներին մոմեր վառած՝ դուրս է եկել ալիքներից ու արածել ափեզրին:

Հակառակ հեթանոսական բազմաստվածություն՝ քրիստոնեությունը մեկ Արարչի կրոն է, Արարիչ, որ Հոր, Որդու և Սուրբ Հոգու եռամիասնություն է: Մակայն Քրիստոսի կողքին միշտ եղել են նրա աշակերտները, առաքյալներն ու մարգարեները, որոնք մարդ լինելով հանդերձ՝ իրենց կենդանության օրոք արդեն սրբանում էին, աստվածային լուսապսակ ստանում: Յուրաքանչյուր ժողովուրդ սրբերի կարգը համարել է իր համար թանկ անուններով՝ Մեսրոպ Մաշտոց, Մովսես Խորենացի, Եղիշե, Գրիգոր Նարեկացի... Այս հոգեղեն մարդիկ իրենց ոգու ուժն ու լույսը նվիրաբերել են ազգի ու հայրենիքի գոյության հավերժացմանը: Եվ նրանց սուրբ անունները դարձել են բնակավայրեր ու լեռներ, շեներ ու ավաններ, դիտեր ու լճեր:

Հայաստանում քրիստոնեության ջահակիրները Քաղևոս ու Բարդուղիմեոս առաքյալներն էին, ուստի և նրանց ու նրանց աշակերտների անուններով ստեղծվել են զգալի թվով տեղանուններ՝ Քաղևոս Առաքյալ, Քաղե, Քաթոս Առաքյալ (գյուղեր), Բարդուղյան լեռնաձյուղ, Բարդուղ (լեռնագագաթ), Բարդուղիմեոս Առաքյալի գյուղ, Դադի գյուղ և վանք և այլն: Հայ եկեղեցին աշխարհին հայտնի է ոչ միայն տաքելական, այլև գրիգորյան կամ լուսավորչական անուններով: Գրիգոր Լուսավորչիչը պատմական այն գործիչներից է, որոնք նոր ու բեկումնային դարաշրջանների հիմք են դնում ժողովուրդների կյանքում: Քաղևոսն ու Բարդուղիմեոսը առաքյալներ էին, կիսալեզենդային, կիսաիրական անձնավորություններ, իսկ Գրիգորը իրական մարդ էր, որը, սակայն, պսակված էր երկնային առաքելությամբ: Այստեղից էլ՝ նրա անվամբ առավել բազմաթիվ տեղանունների առկայություն, որոնք նաև ավելի կենսունակ են: Եկեղյաց գավառը, որը կրում էր Անահիտ աստվածուհու անունը, քրիստոնեական ժամանակներում վերանվանվում է Գրիգորի անունով, Լուսավորիչ է կոչվում նաև Արցախի բարձրավանդակում Զրաբերդի լեռներից մեկը, Գրիգորաշեն (քաղաք), և բազում գյուղեր, սարեր, քարայրներ, ուխտատեղիներ, վանքեր՝ Սուրբ Գրիգոր, Գրիգորիս, Գրիգոր Լուսավորիչ, Սուրբ Լուսավորիչ, Գրիգորագյուղ տարբերակներով: Գրիգոր անունը ձեռք է բերում սրբության կնիք, դարեր անց այդ անունն էր կրելու նաև Գրիգոր Նարեկացին, որի անունը անվան հետ դարձյալ հյուս-

վելու էին գեղեցիկ առասպելներ ու տեղանուններ՝ Գրիգոր Նարեկացու քարայր, Սուրբ Գրիգոր Նարեկացի ուխտավայրեր, վանքեր, անապատներ:

Առանձին խումբ են կազմում և մեծ տարածում ունեն այն տեղանունները, որոնք ծագում են քրիստոնեական ծիսակարգին և գաղափարախոսությանը առնչվող առարկաների, երևույթների, շինությունների անուններից՝ խաչ, մասն, մասունք, ավետարան, դրախտ, դժոխք, դև, աղոթք, սատանա, առաքյալ, նահատակ, կաթողիկոս, եկեղեցի, ժամ, վանք, անապատ, մատաղ, ուխտ և այլն: Այս բառերից ածանցված տեղանուններից ամենատարածվածները իրենց հիմքում ունեն խաչ-ը: Բերենք մի շարք բնորոշ օրինակներ՝ Ավետարանոց (գյուղ), Կաթողիկոսի քար (բերդ Արցախում, այստեղ կատարվել է Հայոց Աղվանքի կաթողիկոսների ընտրությունը), Կաթողիկոսարան (գյուղ), Երիցաշեն, Երիցավան, Աղոթարան (լեռ), Խորանաշատ (գյուղ, վանքեր), Ինն մասունք, Ինն մասանց անապատ, Ինն սրբոց գերեզմաններ (վանքեր, մենաստաններ), Դժոխածոր, Դրախտիկ (լիճ, գետ, գյուղ), Դրախտ (լեռներ, աղբյուր), Եկեղեցածոր, Եկեղեցի (գյուղեր), Խաչ (լեռներ, գյուղեր), Աղբերախաչ, Ագիխաչ, Զորավոր խաչ, Խաչալույս, Երկնային Խաչ, Զարդախաչ... ժամու աղբյուր, Կամակատար, Աստվածաշեն, Աբեղյանք, Առաքելոց, Առաքել, Ամենափրկիչ... (գյուղեր, լեռներ, ուխտատեղիներ և վանքեր):

Հողվածի վերջում ուզում ենք անդրադառնալ տեղանունների այն խմբին, որը կրոնական բովանդակություն է ստացել զուտ ժողովրդական ստուգաբանության շնորհիվ: Հին Հռոմում միամիտ արհեստական ստուգաբանությունը կոչում էին *etymologia bovina*՝ ցուլի ստուգաբանություն, թերևս նրկատի առնելով դրանց անմիջական կոպտությունը²: Գիտական տեսանկյունից այս ստուգաբանությունները, իհարկե, որևէ էական արժեք չունեն, սակայն տվյալ տարածքի հանրության կողմից առկա տեղանունների վերաիմաստավորումը և բացատրությունը որոշակի նշանակություն ունեն և՛ իբրև լեզվի, և՛ իբրև բանահյուսության փաստեր: Վերջին ժամանակներս գիտական գրականության մեջ ժողովրդական ստուգաբանությունը կոչվում է հարանվանական կամ համանվանական աղավաղում:

Ժողովրդական ստուգաբանության սովորաբար ենթարկվում են օտարածին, անսովոր հնչման տեղանունները, այսինքն այնպիսիք, որոնք անմիջական հաղորդակցման պահին անհասկանալի են, և հետևաբար և իմաստազուրկ թե արտասանողի, թե ընկալողի համար: Վերաիմաստավորումն այս դեպքում օտար տեղանունների ազգայնացման, տվյալ իրադրության մեջ հայկականացման, գործընթացի արդյունք է: Օտարալեզու քառը հարմարեցվում է տեղաբնակների լեզվական համակարգին՝ դառնալով վիարժեք իմաստակիր միավոր:

Դժվարմբռնելի տեղանուններին կրոնական բովանդակություն հաղորդելը ինքնին խոսու՞ն փաստ է, այն վկայում է տվյալ ժողովրդի հոգեկան մղումների ուղղվածության, նրա հավատի խորության և անաղարտության մասին: Տեղանունների մեկնաբանության այսպիսի փորձերի հանդիպում ենք և հեթանոսական, և քրիստոնեական շրջանների տեղանունների մեջ: Բերենք համապատասխան օրինակներ. Վանի նահանգի գյուղերից մեկի անունը՝ Խառականց, ըստ ավանդության մեկնաբանվում է հետևյալ կերպ. գյուղում հաստատվել են հեթանոս աստվածների համար ակնակուռ թագեր պատրաստող քոմեր, այստեղից էլ՝ Խառն ականց: Վասպուրական աշխարհի Առևիտուն գավառի անունը ստուգաբանվում է որպես Առ Նոյ ուն (Նոյի ոտքերի մոտ): Վանա լճի մոտ գտնվող Արաոս լեռնագագաթի և Ակնա նույնանուն գյուղի հետ կապված են երկու առասպելներ՝ մեկը կրոնական, մյուսը հայրենասի-

² В. А. Николов, *նշվ. աշխ.*, էջ 132:

րական: Տեղանվան հիմքում գրվում են մի դեպքում Նոյի արտասուքները, երկարատև նավարկությունից հետո ցամաքի կարոտ Նոյր մոտեցել է այդ լեռանը և արտասվել, մյուս դեպքում՝ Վարդանանց սուրբ պատերազմից հետո դառն ողբացող Եղիշեի արցունքները: Վանա լճի կղզիներից մեկի Արտեռ անունը կապվում է արժանահիշատակ Գրիգոր Նարեկացու կյանքի հետ. իր ձգնարանում աղոթելիս նա տեսնում է Թարձյալին և բացականչում՝ Առ Տեր, այսինքն՝ վերցրու այն հոգին, որ պահ տվեցիր մարմնին: Գրիգոր Լուսավորչի անվան հետ կապվում է Սալնապատ վանքի անունը, տեսնելով Վանի նահանգի այս գեղատեսիլ անկյունը՝ նա որոշել է վանք կառուցել և ասել է. «Սա է լավ անապատ»: Անգեղաուն, Անգլա գետ հնադուրյն տեղանունները բացատրվում են Թադևոս Առաքյալի հրաշագործություններով. հեթանոսները ազդավներ դարձած կովի են ելնում քրիստոնյաների դեմ, Թադևոս Առաքյալի գլխավորությամբ վերջիններս վերածվում են անզղների և հաղթում հակառակորդներին:

Ընդհանրացնելով ողջ վերը ասվածը՝ կարելի է հանգել հետևյալ եզրակացության. կրոնական բովանդակության տեղանունների ստեղծման հիմքում ընկած են անվանակոչման երեք սկզբունքներ՝

ա) ըստ անձնանունների (անձնանուն եզրույթն այստեղ ըմբռնում ենք լայն առումով՝ նրա մեջ ներառելով նաև դիցանունները): Այս դեպքում գործում է իր համար թանկ էությունների և դեմքերի անունները հավերժացնելու ժողովրդի այնքան հասկանալի ու մարդկային ձգտումը:

բ) ըստ անվանակոչվող օբյեկտների բնորոշ, ամենահիշարժան հատկությունների, որոնք կարող են լինել ինչպես իրական-նյութական հատկանիշներ, այնպես էլ մարդկանց ուղեղում ծնվող զուգորդումներ՝ և զգացմունքային, և պատկերային բնույթի: Լեռնաշղթան, լճակը, գետը իրենց ձևով նման են խաչի, բագինի, խորանի, եկեղեցու և այլն կամ դրանք մարդու հոգում առաջացնում են երկնային հույսի, փրկության, գոհության և նմանատիպ ուրիշ տրամադրություններ: Խարբերդի նահանգի լեռնագագաթներից մեկը կրում է Պոհանամ անունը, որ լեզվական տեսանկյունից բավական հետաքրքիր փաստ է. բայական դիմավոր ձևերը խիստ ստկավ են դառնում տեղանուն: Ըստ ավանդության, Նոյն առաջին անգամ այստեղ է հանդիպել Աստծուն՝ նրան ուղղելով իր գոհությունը: Նշենք նաև, որ անվանակոչման այս սկզբունքն ամենատարածվածն է և գործունը:

գ) Ըստ տվյալ, անվանակոչման ենթակա վայրում գտնվող եկեղեցու կամ վանքի: Հին ժամանակներում նորաստեղծ բնակավայրերը և անգամ աշխարհագրական օբյեկտները անմիջաբար ստանում էին իրենց մոտակայքում գտնվող սրբավայրերի կամ սրբությունների անունները:

Н. А. ДИЛБАРЯН — Топонимы религиозного содержания в Армении. — В статье исследуются армянские топонимы религиозного содержания, их структура, методы и основы образования, распространённость и продуктивность. Дается их общая смысловая классификация. Топонимы этого вида делятся на две группы — языческие и христианские; исламские топонимы очень малочисленны. В этих двух группах, в свою очередь, различаются следующие виды: а) топонимы, образованные на основе религиозных легенд и преданий, как библейских, так и народных — фольклорных; б) топонимы, связанные с религиозными ритуалами и атрибутами веры; в) топонимы, образованные из имен богов, святых и подвижников; г) топонимы, выражающие религиозные чувства; д) топонимы, возникшие из слов, обозначающих религиозные учреждения и постройки. Рассматриваются также те топонимы, которые по сути не имеют религиозного содержания, однако наделены народной этимологией таким значением. В своем большинстве это чужеродные топонимы, которые народ таким способом пытался объяснить, истолковать.